ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

| | | | |
|---|---|---|---|
| *Համարը* | N 783-Ն | *Տեսակը* | Պաշտոնական Ինկորպորացիա |
| *Տիպը* | Որոշում | *Կարգավիճակը* | Գործում է |
| *Սկզբնաղբյուրը* | ՀՀՊՏ 2017.07.19/45(1320) Հոդ.725 | *Ընդունման վայրը* | Երևան |
| *Ընդունող մարմինը* | ՀՀ կառավարություն | *Ընդունման ամսաթիվը* | 06.07.2017 |
| *Ստորագրող մարմինը* | ՀՀ վարչապետ | *Ստորագրման ամսաթիվը* | 10.07.2017 |
| *Վավերացնող մարմինը* | | *Վավերացման ամսաթիվը* | |
| *Ուժի մեջ մտնելու ամսաթիվը* | 01.01.2018 | *Ուժը կորցնելու ամսաթիվը* | |

Կապեր այլ փաստաթղթերի հետ
Փոփոխողներ և ինկորպորացիաներ

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

6 հուլիսի 2017 թվականի N 783-Ն

### ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածը՝ Հայաստանի Հանրապետությա կառավարությունը ***որոշում է.***

1. Սահմանել՝

1) հարկային մարմնի կողմից հարկ վճարողների ցանկերի հրապարակման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ցանկերի NN 1, 2, 3, 4, 5, 6 և 7 ձևերը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) մետաղական օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվություն ստացած ընդերքօգտագործող հարկ վճարողներ արդյունքներով վճարած հարկերի և վճարների ցանկերը, արտահանած ապրանքների ցանկերը՝ արժեքային, բնաիրային և քա չափերով, հարկային մարմնի պաշտոնական ինտերնետային կայքում հրապարակվում են Հայաստանի Հանրապետության կա 2018 թվականի հունիսի 8-ի N 666-Ն որոշման N 3 հավելվածով սահմանված ձևին համապատասխան:

***(1-ին կետը լրաց. 24.12.20 N 2157-Ն)***

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2018 թվականի հունվարի 1-ից:

**Հայաստանի Հանրապետության**
**վարչապետ**

**Կ.**

**2017 թ. հուլիսի 10**
**Երևան**

**Հավելված N 1**
**ՀՀ կառավարության 2017**
**հուլիսի 6-ի N 783-Ն որ**

## Կ Ա Ր Գ

## ՀԱՐԿԱՅԻՆ ՄԱՐՄՆԻ ԿՈՂՄԻՑ ՀԱՐԿ ՎՃԱՐՈՂՆԵՐԻ ՑԱՆԿԵՐԻ ՀՐԱՊԱՐԱԿՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են հարկային մարմնի կողմից հարկ վճարողների ցանկերի հրապարակման հետ կապվա հարաբերությունները:

2. Հարկ վճարողների իրազեկման նպատակով հարկային մարմինն իր պաշտոնական ինտերնետային կայքում հրապարա վճարողների ցանկերը՝ Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ցա ժամկետներին համապատասխան (բացառությամբ օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «զ» ենթակետով նախա տեղեկությունների):

3. Հարկային մարմնի կողմից ցանկերը կազմվում են՝ հիմք ընդունելով հարկ վճարողների կողմից տվյալ հարկային տարվ ներկայացված հարկային հաշվարկները, Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարված հարկերը, հարկային մ իրականացված ստուգման կամ ուսումնասիրության արդյունքները, հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա հա տվյալները:

4. Ցանկերը կազմվում են ըստ թվային տվյալների նվազման հաջորդականության:

5. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 783-Ն որոշման N 2 հավելվածի N 2 ձ կազմման իմաստով՝ ապառքը հաշվարկվում է որպես հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի և հաշվետու տարվա հունվարի 1- առկա ապառքի դրական տարբերություն: N 2 ձևի ցանկում ներառվում են հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտ ապառքի 1 մլն դրամ և ավելի աճ ունեցող առաջին 1000 հարկ վճարողների վերաբերյալ տվյալները՝ ըստ ապառքի աճի մեծո

5.1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 783-Ն որոշման N 2 հավելվածի N 4 կազմման իմաստով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած 50 միլիոն դրամ և ավելի շահութահարկի մ հաշվարկվում է որպես այդ հարկատեսակի գծով հարկ վճարողի միասնական հաշվից վճարված (մարված) մեծություն՝ հաշվ (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները:

***(5.1-ին կետը լրաց. 24.12.20 N 2157-Ն)***

5.2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 783-Ն որոշման N 2 հավելվածի N 5 կազմման իմաստով՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարած 10 միլիոն դրամ և ավելի եկամտային հարկ հաշվարկվում է որպես այդ հարկատեսակի գծով հարկ վճարողի միասնական հաշվից վճարված (մարված) մեծություն՝ հաշվ (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները:

***(5.2-րդ կետը լրաց. 24.12.20 N 2157-Ն)***

6. Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 783-Ն որոշման N 2 հավելվածի N 7 ձ կազմվում է՝ հիմք ընդունելով հարկ վճարողների կողմից հարկային տարվա սկզբից միասնական հաշվից վճարված (մարված հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հաշվին վերադարձված գումարները և (կամ) մաքսային մարմնի կողմից հավաք գումարների մեծությունը աճողական կարգով: Ընդ որում՝

1) որպես հարկային տարվա սկզբից վճարված (մարված) հարկերի և վճարների մեծություն՝ ցանկի «պետական բյուջեի ել հարկային մարմնի մասով» սյունակի համապատասխան տողում լրացվում է ցանկի՝ ըստ հարկատեսակների անվանումների հարկային մարմնի մասով գումարների հանրագումարը: Ըստ հարկատեսակների սյունակները լրացվում են որպես տվյալ հար հարկ վճարողի միասնական հաշվից վճարված (մարված) գումարի մեծություն՝ հաշվի առնելով (նվազեցնելով) միասնական հ վերադարձված գումարները: Ընդ որում, վերադարձված գումարների մեջ չեն ներառվում միասնական հաշիվ վերադարձված՝ արժեքի հարկի (այսուհետ՝ ԱԱՀ) զրոյական դրույքաչափով հարկվող գործարքների գծով ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը, յո հաշվետու եռամսյակին հաջորդող ամսվա 21-ի դրությամբ ԱԱՀ-ի փոխհատուցվող գումարը, Հայաստանի Հանրապետությա օրենսգրքի 457-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված՝ բյուջեից հաշվանցման ենթակա ԱԱՀ-ի գումարը, Հայաստանի Հանրա հարկային օրենսգրքի 89-րդ հոդվածի 2-րդ մասի 1-3-րդ կետերով սահմանված գործարքների իրականացման դեպքում ակցիզ փոխհատուցվող գումարը, ինչպես նաև 2018 թվականի հունվարի 1-ի դրությամբ առկա գերավճարը և գերավճարից տարբեր Սույն ենթակետի կանոնները հարկերի և վճարների մասով կիրառելի են «այլ հարկեր, վճարներ» սյունակի համապատասխան լրացնելիս: Միասնական հաշվի միջոցով չմարվող պետական վճարի մասով հիմք է ընդունվում համապատասխան գանձապ կատարված վճարումը.

2) որպես հարկային տարվա սկզբից վճարված հարկերի մեծություն՝ ցանկի «պետական բյուջեի եկամուտներ մաքսային ս սյունակի համապատասխան տողում լրացվում է ցանկի՝ ըստ հարկատեսակների անվանումների սյունակների մաքսային մա գումարների հանրագումարը: Ըստ հարկատեսակների սյունակները լրացվում են որպես տվյալ հարկատեսակի գծով հարկ վճ պետական բյուջե վճարված գումարի մեծություն: Սույն ենթակետի կանոնները հարկերի և վճարների մասով կիրառելի են «այ վճարներ» սյունակի համապատասխան տողը լրացնելիս.

3) ցանկի «ընդամենը մուտքերը» սյունակի համապատասխան տողում լրացվում է «պետական բյուջեի եկամուտներ հարկ մասով» սյունակի և «պետական բյուջեի եկամուտներ մաքսային մարմնի մասով» սյունակի համապատասխան տողերի հանր

4) ցանկի «ԱԱՀ-ի և ակցիզային հարկի մասով՝ միասնական հաշիվ վերադարձված գումարներ» սյունակում լրացվում են հարկային ստուգման արդյունքում կամ պարզեցված ընթացակարգով միասնական հաշվին մուտքագրված ԱԱՀ-ի գումարներ հաշվին մուտքագրման ենթակա գումարների հիմնավորվածության ուսումնասիրության արդյունքներով հիմնավորված և միա վերադարձված ԱԱՀ-ի և ակցիզային հարկի գումարները, համալիր հարկային ստուգման արդյունքում միասնական հաշիվ վե ակցիզային հարկի գումարները:

***(6-րդ կետը խմբ. 24.12.20 N 2157-Ն)***

7. Հիմք ընդունելով հարկային մարմինների կողմից անցկացված ստուգումների արդյունքները կամ ստուգումների արդյուն ստուգման ակտերի բողոքարկման արդյունքները կամ սույն կարգի 2-րդ կետում նշված տվյալների համար հիմք հանդիսացա հաշվարկներում հարկ վճարողների կողմից Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքով սահմանված կարգով ինք ճշգրտումներ կատարելու հանգամանքը՝ հարկային մարմինը կարող է հարկ վճարողների դիմումների հիման վրա հրապարա վճարողների վերաբերյալ ճշգրտումներ:

***(հավելվածը լրաց., խմբ. 24.12.20 N 2157-Ն)***

**Հայաստանի Հանրապետության**
**կառավարության աշխատակազմի**
**ղեկավար**

**Հավելված N 2**
**ՀՀ կառավարության 2017**
**հուլիսի 6-ի N 783-Ն որ**

**Ց Ա Ն Կ**

**20_____թ. հարկային տարվա արդյունքներով հարկային վնասներ հայտարարագրած հարկ վճարողն**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |

**Ց Ա Ն Կ**

**20_____թ. հարկային տարվա արդյունքներով ապառքներ կուտակած հարկ վճարողների**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | | |

**Ց Ա Ն Կ**

**20_____թ. հարկային տարվա ընթացքում աշխատողի՝ աշխատանքի ընդունումը Հայաստանի Հանրապե օրենսդրությամբ սահմանված կարգով չգրանցած և (կամ) գրանցման հայտ չներկայացրած հարկ վճար**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |

**Ց Ա Ն Կ**

**20_____թ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 50 միլիոն դ շահութահարկ վճարած հարկ վճարողների**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |

**Ց Ա Ն Կ**

**20_____թ. հարկային տարվա արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե 10 միլիոն դ եկամտային հարկ վճարած հարկային գործակալների (առևտրային կազմակերպությունների)**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Հարկային գործակալի (առևտրային կազմակերպության) անվանումը | Գտնվելու վայրը |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| | | | |
| | | | |
| | | | |

**Ց Ա Ն Կ**

**20__թ. հարկային տարվա ընթացքում գործունեությունը կասեցված հարկ վճարողների**

| NN ը/կ | ՀՎՀՀ-ն | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը | Կասեցված գործունեության տեսակը | Կասեցման ժամկետը (առաջին և վերջին օրերը) |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | | | | | |
| | | | | | |
| | | | | | |

**Ց Ա Ն Կ**

**Առաջին 1000 խոշոր հարկ վճարողների և նրանց կողմից 20_ թ. հարկային տարվա ընթացքում վճարված վճարների մեծությունների**

_

| NN ը/կ | ՀՎՀՀ | Կազմակերպության անվանումը կամ անհատ ձեռնարկատիրոջ, նոտարի անունը, ազգանունը | Գտնվելու կամ գործունեություն իրականացնելու վայրը | ---------- «...»-ի դրությամբ հարկ վճարողի կողմից ՀՀ պետական բյուջե վճարված հարկերի և վճարների ընդհանուր գումարը (հազ. դրա | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | ընդամենը՝ մուտքերը | որից՝ | | | | | | |
| | | | | | պետական բյուջեի եկամուտներ հարկային մարմնի մասով | պետական բյուջեի եկամուտներ մաքսային մարմնի մասով | այդ թվում՝ | | | | |
| | | | | | | | շահութա-հարկը | եկամտային հարկը | ԱԱՀ-ն | акցիզային հարկը | այլ հարկ վճար |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 | 11 | 12 |
| | | | | | | | | | | | |

*(ձևը խմբ. 24.12.20 N 2157-Ն)*
*(հավելվածը խմբ. 24.12.20 N 2157-Ն)*

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար

Վ